

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

**ԾՐԱԳԻՐ  
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԴԱՍԸՆԹԱՅԻ**

**XX ԴԱՐԻ  
ՀԱՅ ԱՐՎԵՍՏԸ**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2025**

ՀՏԴ 7.01/.03(479.25)

ԳՄԴ 85.03(5Հ)

Ք 911

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիրքսրահորդը:*

Կազմող՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ

**Ս. Վ. Վարդանյան**

Ք 911 XX դարի հայ արվեստը: Ծրագիր բակալավրիատի մաս-  
նագիտական դասընթացի /Ս. Վարդանյան. – Երևան,  
ԵՊՀ հրատ., 2025, 48 էջ:

60 ժամ դասախոսություն

30 ժամ սեմինար

9 կրեդիտ

6 ժամ շաբաթական

7-րդ աշնանային կիսամյակ

ՀՏԴ 7.01/.03(479.25)

ԳՄԴ 85.03(5Հ)

ISBN 978-5-8084-2742-6

© ԵՊՀ հրատ., 2025

© Կազմողի համար, 2025

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                   |    |
|---------------------------------------------------------------------------------------------------|----|
| ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ .....                                                                              | 5  |
| Դասընթացի նպատակն ու խնդիրները .....                                                              | 5  |
| Կրթական արդյունքները .....                                                                        | 6  |
| Դասընթացի հիմնարար գաղափարները .....                                                              | 7  |
| Դասընթացի հիմնական հասկացությունները .....                                                        | 7  |
| ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ .....                                                                        | 8  |
| Ուսանողի թղթապանակը .....                                                                         | 9  |
| Գնահատման և ստուգման մեթոդները .....                                                              | 9  |
| Ստուգումների անցկացման ձևը և գնահատման<br>չափանիշները .....                                       | 10 |
| ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ .....                                                                      | 12 |
| Ներածություն .....                                                                                | 12 |
| Թեմա 1. XX դարասկզբի հայկական մշակույթը .....                                                     | 13 |
| Թեմա 2. Հայաստանի առաջին հանրապետության<br>մշակութային և գեղարվեստական կյանքը (1918-1920). 14     |    |
| Թեմա 3. Խորհրդային Հայաստանի արվեստը 1920-<br>ական թվականներին .....                              | 15 |
| Թեմա 4. «Սոցիալիստական ռեալիզմի» հիմունքները և<br>դրա անդրադարձը 1930-ականների հայ արվեստում .... | 16 |
| Թեմա 5. Մշակութային կյանքը ՀԽՍՀ-ում 1940-1950-<br>ականների սկզբին .....                           | 17 |
| Թեմա 6. 1956-1960-ականներ: Հայ արվեստը<br>Խրուշչովյան «ձնհալի» տարիներին .....                    | 18 |
| Թեմա 7. Հայ արվեստը 1970-ականներին .....                                                          | 21 |
| Թեմա 8. 1980-ականների հայկական արվեստը .....                                                      | 21 |

|                                                                          |    |
|--------------------------------------------------------------------------|----|
| <i>Թեմա 9. Հայաստանի 3-րդ հանրապետության արվեստը</i><br>(1991-1999)..... | 23 |
| <b>XX ԴԱՐԻ ԱԿՆԱՌՈՒ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ</b>                                |    |
| ՑԱՆԿ .....                                                               | 24 |
| ԱՂՅՈՒՄԱԿ .....                                                           | 32 |
| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....                                                      | 34 |
| РЕЗЮМЕ.....                                                              | 46 |
| SUMMARY .....                                                            | 47 |

## **ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ**

### **Դասընթացի նպատակն ու խնդիրները**

**Դասընթացի նպատակն է՝** ուսանողին գիտելիքներ հաղորդել XX դարի հայ արվեստի պատմության ու տեսության վերաբերյալ<sup>1</sup>:

### **Դասընթացի խնդիրներն են՝**

- 1 Դասախոսությունների, գործնական՝ հետազոտական աշխատանքների, թանգարաններ և պատկերասրահներ այցելությունների, ժամանակակից նկարիչների հետ հանդիպումների միջոցներով անհրաժեշտ գիտելիքներ հաղորդել XX դարի հայ արվեստի պատմության վերաբերյալ:
- 2 Ծանոթացնել XX դարի հայ արվեստի պատմության պարբերացմանը, հիմնական փուլերին և առանձնահատկություններին:
- 3 Ներկայացնել XX դարի հայ արվեստի յուրահատկությունները և համեմատության միջոցով ցույց տալ ընդհանրությունները համաշխարհային արվեստի հետ:
- 4 Հաղորդել գիտելիքներ հայ անվանի նկարիչների և քանդակագործների կյանքի ու գործունեության վերաբերյալ:

---

<sup>1</sup> Ծրագրի մեջ ընդգրկված չեն սփյուռքահայ արվեստագետները, քանի որ «Արվեստաբանություն» բակալավրի կրթական ծրագրում առկա է «Սփյուռքահայ կերպարվեստ» առանձին առարկա:

5 Սովորեցնել նույն ժամանակաշրջանի ստեղծագործությունների գիտական վերլուծություն կատարել և ինքնուրույն գիտական աշխատանք գրելու հմտություններ:

### **Կրթական արդյունքները**

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. Ամբողջական գիտելիքներ կունենա XX դարի հայ արվեստի պատմության հիմնական վուլերի, դարասկզբի, առաջին հանրապետության, խորհրդային շրջանի, երրորդ հանրապետության քաղաքական ու մշակութային կյանքի և այդ միջավայրում ստեղծված արվեստի գործերի, դրանց առանձնահատկությունների մասին:
2. Կյուրացնի XX դարի հայկական քանդակագործության, գեղանկարչության, գրաֆիկայի տեսությունն ու պատմությունը:
3. Կճանաչի հայ բազմաթիվ արվեստագետների, կժանոթանա նրանց թողած հարուստ ժառանգության, նրանց արվեստի գեղարվեստական լեզվի և նրանց արվեստում տարբեր ուղղությունների դրսևորման հետ:
4. Կկարողանա արժևորել և արվեստաբանական վերլուծության ենթարկել XX դարում ստեղծված հայ արվեստի ստեղծագործությունները:
5. Կկատարի գիտահետազոտական աշխատանքներ առաջարկվող թեմաների վերաբերյալ:

**Դասընթացի հիմնարար գաղափարները** բխում են հայ արվեստի պատմության պարբերացման և ուսումնասիրության մասին Ռուբեն Դրամբյանի, Վահան Հարությունյանի, Մանյա Ղազարյանի, Մարիամ Այվազյանի, Եղիշե Մարտիրոսյանի, Նոնա Ստեփանյանի, Հենրիկ Իգիթյանի, Լևոն Զուգասզյանի, Արարատ Աղասյանի գիտական հայեցակարգերից:

**Դասընթացի հիմնական հասկացություններն են՝** «XX դար», «պետություն և արվեստ», «հայ արվեստի պատմություն», «անհատ և արվեստ», «արվեստի տեսություն», «արվեստի գեղարվեստական քննադատություն», «մտավորական-արվեստագետ», «Ճարտարապետություն», «կերպարվեստ», «գեղանկարչություն», «քանդակագործություն», «գրաֆիկա», «ձև», «ոճ», «գույն», «ուղղություն», «գեղարվեստական դպրոց», «անհատական ձեռագիր», «ստեղծագործության վերլուծություն»:

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

**Դասընթացի կազմակերպման ձևերն են՝** դասախոսությունները և սեմինար պարապմունքները: Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասախոսությունն է, որի ընթացքում ուսանողներին մատուցվում է տվյալ դասաժամին վերաբերող տեսական նյութը՝ զուգահեռաբար ցուցադրելով նկարներ: Թեմաներն ուղեկցվում են տեսանյութերի դիտումով և պատկերասրահներ ու թանգարաններ պարտադիր այցելությամբ: Սեմինարներն իրականացվում են ուսանողների բանավոր հարցման միջոցով: Բանավոր հարցումը թույլ է տալիս ակտիվ քննարկում կազմակերպելու դասընթացի ընթացքում յուրացրած տեսական հարցերի շուրջ: Առանձին սեմինար պարապմունքներ իրականացվում են լսարանից դուրս՝ Երևան քաղաքի թանգարաններում և պատկերասրահներում, որտեղ ուսանողների ու դասախոսի եռանդուն երկխոսության, քննարկման միջոցով ամրապնդվում են լսարանային դասերի ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքները և նպաստում ուսանողների ինքնուրույն մտածողության ձևավորմանը: Նաև հանդիպումներ են կազմակերպվում ժամանակակից նկարիչների հետ: Նրանց արվեստանոցում ուսանողներն ականատես են լինում գրաֆիկական, գեղանկարչական և քանդակագործական աշխատանքների ստեղծման գործընթացին: Նրանք զուգահեռաբար ունենդրում են արվեստագետների դիտարկումները XX դարի մշակութային կյանքի, առանձին արվեստագետների ու արվեստի մասին, ուսանողներն իրավունք են ունենում հղելու իրենց հուզող ու հետաքրքրող հարցերը և ստա-

նալու դրանց պատասխանները: Դասընթացի սկզբում յուրաքանչյուր ուսանողի հանձնարարվում է ինքնուրույն գրել ռեֆերատ ուսումնական ծրագրում ընդգրկված XX դարի հայ արվեստագետների մասին և սեմինարների ընթացքում համակարգչային ծրագրի՝ պրեզենտացիայի միջոցով 20-25 բուլետեններում ներկայացնել նրա կյանքն ու արվեստը: Գրավոր և բանավոր քննության ժամանակ, տեսական գիտելիքը հիմք ընդունելով, ուսանողին տրամադրվում է նաև արվեստի ստեղծագործության (գրաֆիկա, գեղանկարչություն, քանդակ) վերատպություն՝ արվեստաբանական վերլուծություն կատարելու համար:

**Ուսանողի թղթապանակը** մեթոդական հնարք է, որն ընդգրկում է կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած աշխատանքը: Այն բաղկացած է՝

- սեմինարների հարցման պատասխաններից,
- ռեֆերատ աշխատանքից, որոնց թեմաներն առաջադրվում են դասախոսի կողմից, գրավոր և բանավոր (պրեզենտացիա)՝ ռեֆերատի ներկայացմամբ:

Ուսանողներն ազատ են առաջադրվող թեմաներից որևէ մեկի ընտրության հարցում՝ դրանք չկրկնելու պայմանով:

**Գնահատման և ստուգման մեթոդներ.** կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշվում է ընթացիկ գրավոր երկու քննությունների և եզրափակիչ բանավոր հարցման միջոցով:

## **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները՝**

- առաջին և երկրորդ գրավոր ընթացիկ քննություններ – յուրաքանչյուրը 3 միավոր, առավելագույնը՝ 6 միավոր: Յուրաքանչյուր քննության հարցատոմսը բաղկացած է տեսական 2 հարցերից (յուրաքանչյուր հարցի արժեքը՝ 1 միավոր, առավելագույնը՝ 2 միավոր) և մեկ գործնական հարցադրումից (հարցի արժեքը՝ 1 միավոր), այն է՝ ստեղծագործության ճանաչողություն և նկարագրություն, վերլուծություն: Միավորների քայլը 0.5 է:
- եզրափակիչ բանավոր քննություն (9 միավոր) – հարցատոմսն ընդգրկում է երկու տեսական հարցեր (յուրաքանչյուր հարցի արժեքը՝ 3 միավոր, առավելագույնը՝ 6 միավոր) և մեկ գործնական հարցադրում՝ ստեղծագործությունների ճանաչողություն (հարցի արժեքը՝ 1 միավոր)՝ ընդհանուր 7 միավոր: Բանավոր եզրափակիչ հարցման մեջ են ներառված նաև ուսանողական թղթապանակի գնահատումը՝ 7 միավոր (ռեֆերատ, սեմինարի հարցում և արտալսարանային դասերի վերաբերյալ **ինքնուրույն աշխատանքներ**):

- **առաջին ընթացիկ քննություն- 3 միավոր**
- **երկրորդ ընթացիկ քննություն- 3 միավոր**
- **ինքնուրույն աշխատանք- 7 միավոր**
- **եզրափակիչ քննություն- 7 միավոր**

**Այսպիսով՝ ուսումնական դասընթացի արդյունքում  
ուսանողի ձեռք բերած գիտելիքը կարող է գնահատվել  
առավելագույնը 20 միավոր:**

## ԴԱՍԱԽԱՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ

**Ներածություն:** Ակնարկ XX դարի համաշխարհային պատմության, կարևոր իրադարձությունների, մշակութային կյանքի վերաբերյալ: Հայ իրականության փոխառնչությունը համաշխարհային գործընթացների հետ, հայերի դերը և ներդրումը XX դարի մշակույթի մեջ: Հայաստանի պատմաքաղաքական իրադարձություններն ու դրանց անդրադարձը հայ մշակույթի և արվեստի ձևավորման վրա: XX դարում Հայաստանի երեք հանրապետությունների առաջացումը, յուրաքանչյուրի քաղաքական և մշակութային ծրագրերն ու դրանց իրականացումը: Քաղաքաշինության, ճարտարապետության, կերպարվեստի, գրականության, թատրոնի, կինոյի, սպորտի և մյուս բնագավառների զարգացումն ու վերելքը: Քաղաքական գործիչներ, մտավորականներ, հոգևոր առաջնորդներ, անհատներ: Նրանց հայրենամոլեր առաքելությունը:

XX դարի հայ կերպարվեստի պարբերացումը. շրջաններ, զարգացման նախադրյալներ (տես՝ աղյուսակը): Ավագ սերնդի հայ արվեստագետներին կրթող գեղարվեստական հաստատությունները՝ Սանկտ Պետերբուրգի կայսերական գեղարվեստի ակադեմիան (խորհրդային շրջանում՝ Լենինգրադի Իլյա Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտ), Մոսկվայի ճարտարապետության, քանդակագործության, գեղանկարչության ուսումնարանը (խորհրդային շրջանում՝ Մոսկվայի Վասիլի Սուրիկովի անվան գեղարվեստի ինստիտուտ), Ռուդոլֆ Ժուլիանի փարիզյան մասնավոր ակադե-

միան: Հռոմի, Վիեննայի, Բեռլինի, Մյունխենի գեղարվեստի ակադեմիաները, Անտոն Աշբեի և Շիմոն Հոլշիի մյունխենյան դպրոցները: 1873 թվականին հիմնադրված Թիֆլիսյան գեղարվեստական ընկերության (1877 թվականից՝ Գեղարվեստը խրախուսող կոմկասյան ընկերության) նկարչական դպրոցը (1922 թվականից Գեղարվեստի ակադեմիա), 1883 թվականին Կ. Պոլսում բացված Օսմանյան Գեղարվեստից վարժարանը (1928 թվականից Ստամբուլի Գեղարվեստի ակադեմիա):

*Թեմա 1. XX դարասկզբի հայկական մշակույթը:* Հայ արվեստագետները Կոնստանդնուպոլսում, Փարիզում, Վենետիկում, Թիֆլիսում, Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում, Նոր Նախիջևանում, Բաքվում և այլուր: Գրականության, թատրոնի, երաժշտության և կերպարվեստի բնագավառի անվանի դեմքերը: Գրողներ և հասարակական գործիչներ Թիֆլիսում՝ Պերճ Պողոսյան, Ղազարոս Աղայան, Մուրացան, Նար-Դոս, Ալեքսանդր Շիրվանզադե, Հովհաննես Հովհաննիսյան, Ալեքսանդր Ծատուրյան, Վրթանես Փափագյան, Հովհաննես Թումանյան, Վահան Տերյան, Կոստանդնուպոլսում՝ Հակոբ Պարոնյան, Արփիար Արփիարյան, Գրիգոր Զոհրապ, Դանիել Վարուժան, Սիամանթո, Երվանդ Օտյան, Արշակ Զոպանյան, Ռուբեն Սևակ, Սիսակ Մեծարենց, Լևոն Շանթ: Երաժշտության բնագավառում. Կոմիտաս, Մակար Եկմալյան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Նիկողայոս Տիգրանյան, Ալեքսանդր Սպենդիարյան, Արմեն Տիգրանյան, Ռոմանոս Մելիքյան: Թատրոնում. Պետրոս Աղամյան, Սիրանույշ, Հովհաննես Աբելյան, Վահ-

րամ Փափագյան: Հայ նշանավոր գեղանկարիչների կյանքն ու գործունեությունը մինչև խորհրդային կարգերի հաստատումը, այդ թվում՝ Արշակ Ֆեֆլաճյան, Վարդգես Սուրենյանց, Եղիշե Թադևոսյան, Գևորգ Բաշինջաղյան, Հմայակ Հակոբյան, Ստեփան Աղաջանյան, Հմայակ Արծաթանյան, Փանոս Թերլեմեզյան, Վահրամ Գայֆեճյան, Վրթանես Ախիկյան և այլք: Իմպրեսիոնիզմի, սիմվոլիզմի, մոդեռնիզմի արձագանքները հայ արվեստում: Նոր տեսակներով, ուղղություններով ու ժանրերով հարստացող հայ արվեստը: Հայ արվեստագետների խմբակային ու անհատական ցուցահանդեսների կազմակերպումը տարբեր քաղաքներում: Կերպարվեստի դերի բարձրացումը և նշանակությունը հասարակական կյանքում: Քանդակագործներ Անդրեաս Տեր-Մարտիքյանի, Միքայել Միքայելյանի, Հակոբ Գյուրջյանի ստեղծագործությունները: Թիֆլիսը՝ հայ մշակույթի կենտրոն: Հայ արվեստագետների միությունը (1916), նրա կանոնադրությունը: Մարտիրոս Սարյանի վաղ շրջանի արվեստը: Գրական-գեղարվեստական թերթերը, հանդեսներն ու տարեգրքերը. «Գեղունի», «Բազմավեպ» (Վենետիկ), «Գեղարվեստ», «Խաթաբալա», «Մշակ», «Տարագ» (Թիֆլիս), «Անահիտ» (Փարիզ), «Ծաղիկ», «Շանթ», Թեոդիկ՝ «Ամենուն տարեցույցը» (Կ. Պոլիս), «Արարատ», 1944-ից՝ «Էջմիածին» (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

**Թեմա 2. Հայաստանի առաջին հանրապետության մշակութային և գեղարվեստական կյանքը (1918-1920):** Հնությունների պահպանության պետական կոմիտեի և Ազգային թանգարանի հիմնադրումը, որի հիմքերի վրա արդեն 1921 թ.

Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ ստեղծվում է Հայաստանի պետական թանգարան (թանգարանի գեղարվեստական բաժինը 1935-ին վերաձվում է կերպարվեստի թանգարանի, 1947-ից կոչվում է Հայաստանի պետական պատկերասրահ, իսկ 1991-ից Հայաստանի ազգային պատկերասրահ): Ալեքսանդր Թամանյանը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Արշակ Ֆեֆլաճյանը նորաստեղծ պետության հիմքերում: Ջինանշանի, դրոշի, թղթադրամների և նամականիշերի ստեղծումը: «Հայ արվեստագետների միության» երկրորդ ցուցահանդեսի վերաբացումը (1919) Երևանի նոր գիմնազիայի շենքում (շուրջ 250 աշխատանք): Գարեգին Հովսեփյանը ԵՊՀ-ի՝ հայ արվեստի պատմության և տեսության բաժնի հիմնադիր:

**Թեմա 3. Խորհրդային Հայաստանի արվեստը 1920-ական թվականներին:** Գեղարվեստական կյանքի ուրվագիծը: Հայրենադարձ արվեստագետները: Ալեքսանդր Թամանյանը և հայկական ժամանակակից ազգային ճարտարապետության սկունքները: 1924 թ. ապրիլին Խորհրդային Հայաստանի կառավարական նիստին Ա. Թամանյանի հեղինակած՝ Երևան քաղաքի վերաշինության գլխավոր հատակագծի հաստատումը և հանրապետությունում նոր թափ ստացած քաղաքաշինությունը՝ արդյունաբերության շեշտակի զարգացմամբ: «Լենինյան մոնումենտալ պրոպագանդայի» ծրագրերը (1918) և դրանց հետագա իրականացումը Խորհրդային Հայաստանում: Խորհրդահայ նշանավոր առաջին քանդակագործները՝ Վաղարշակ Մելիք-Հակոբյան, Կարո Հալաբյան, Արա Սարգսյան, Այծեննիկ Ուրարտու,

Սուրեն Ստեփանյան: Նկարչական առաջին կրթարանները Խորհրդային Հայաստանում: 1921 թ. Գյումրու նկարչական ստուդիան, որը 1936-ին դարձավ նկարչական քառամյա դպրոց, իսկ 1947-ից ստացավ Ս. Մերկուրովի անունը: 1922 թ. հիմնադրված Երևանի գեղարվեստաարդյունաբերական (Գեղարդ) տեխնիկումը, 1930-ին վերածվեց գեղարվեստական մանկավարժական ուսումնարանի և 1941-ից ստացավ Փանոս Թերլեմեզյանի անունը (այժմ՝ Գեղարվեստի պետական քոլեջ): «Հայաստանի կերպարվեստի աշխատողների ընկերությունը» (1923), նախագահ՝ Ա. Թամանյան, տեղակալ՝ Մարտիրոս Սարյան: 1924 թ. Երևանի Մշակույթի տանը բացված այդ ընկերության առաջին ցուցահանդեսը: Ռուբեն Դրամբյանը (1891-1991)՝ Հայաստանի պետական պատկերասրահի տնօրեն (1924-1951), արվեստի մեծ գիտակը, մտավորականը: 1927-ին հիմնված Հեղափոխական Ռուսաստանի նկարիչների ասոցիացիայի հայկական բաժանմունքը (Ассоциация художников революционной России, АХРР): Այս շրջանի թեմատիկ նկարը: Սարյանի «Հայաստան» պաննոն:

*Թեմա 4. «Սոցիալիստական ռեալիզմի» հիմունքները և դրա անդրադարձը 1930-ականների հայ արվեստում:* «Սոցիալիստական ռեալիզմի» (1932) հիմնական դրույթները, ստեղծագործական միությունների կազմավորումը, արվեստի և գրականության նոր քաղաքականությունը: Գեղանկարչության նոր թեմաներն այս շրջանի հայ նկարիչների արվեստում: Մոսկվայում կայացած «Հայկական ԽՍՀ կերպարվեստը 11 տարում» (1931) և «Հայկական ԽՍՀ կերպարվեստը» (1939) ցուցահանդեսները: 1932-1938 թթ.

Երևանում «Խորհրդային արվեստ» նոր ամսագրի հրատարակումը, որը 1940-ից անվանվեց «Սովետական արվեստ» և լույս տեսավ մինչև 1989 թ.: «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին նվիրված գիտական և գրական-գեղարվեստական միջոցառումները, էպոսին նվիրված ցուցահանդեսը, հրատարակված նոր գրքերը՝ էպոսի բարձրորակ նկարագարողումներով (1939): Մշակութային գործիչների ներդրումը ազգային ինքնագիտակցության բարձրացման գործում. Հովսեփ Օրբելի: Արա Սարգսյանի, Հակոբ Կոջոյանի, Վահրամ Գայֆեջյանի, Երվանդ Քոչարի, Մեղրակ Առաքելյանի արվեստը, նրանց ինքնատիպ գեղարվեստական լեզվի և ժամանակի քելադրանքի համատեղումը: Խորհրդահայ մշակույթի հետաքրքրական ֆենոմենը. շինծու գաղափարների, զանազան մտացածին որոշումների տիրող պայմաններում հակառակ երևույթը՝ ազգային մշակույթի բոլոր բնագավառների վերելքը: Միևնույն ժամանակ եվրոպական և ռուսական գեղարվեստական լավագույն ավանդույթների պահպանումը: Հայ գրքարվեստը 1920-1930-ական թթ.-ին, կոնստրուկտիվիստական և ֆուտուրիստական միտումները:

**Թեմա 5. Մշակութային կյանքը ՀԽՍՀ-ում 1940-1950-ականների սկզբին:** Սոցիալիստական ռեալիզմի դրսևորումը հայ արվեստում: 1941 և 1942 թթ. ցուցահանդեսները Երևանում՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմին: Այս շրջանի թեմատիկ նկարը. Հայրենական պատերազմի արտացոլումը կերպարվեստում: Մերգեյ Մերկուրովի հաստոցային և մոնումենտալ (Լենինի, Ստալինի, Ստեփան Շահումյանի) քանդակները: Պլենների սկզբունքը Գաբրիել Գյուրջյանի

արվեստում և նրա ստեղծած շրջիկ արվեստանոցի նշանակությունը: 1945 թ. Գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումը, ակադեմիզմի նշանակությունը հայ արվեստում՝ Արա Սարգսյան: Խորհրդային շրջանի «հանդիսավոր» դիմանկարը. Դմիտրի Նալբանդյան: Գրաֆիկայի զարգացումը խորհրդային կարգերի հաստատումից հետո, տեսակներն ու ժանրերը: Հայ անվանի գրաֆիկներ: Հայրենադարձ արվեստագետները (1946). Հարություն Կալենց, Արմինե Կալենց, Պետրոս Կոնտուրաջյան, Բարդուղ Վարդանյան, Արամ Դևրիբյան, Գրիգոր Ահարոնյան. նրանց ազատ աշխարհայացքի բախումը սոցիալիստական իրականության հետ: Միեր Աբեղյանի, Մարիամ Ասլամազյանի, Խաչատուր Եսայանի արվեստը, նրանց ինքնատիպ ոճերի առանձնահատկությունները:

**Թեմա 6. 1956-1960-ականներ: Հայ արվեստը Խրուշչովյան «ձնհալի» տարիներին:** Նոր միտումներ, գեղարվեստական նոր թեմաներ, նոր արտահայտչամիջոցներ: Ազգային ինքնագիտակցության, ավանդությունների, պատմության չլուծված խնդիրների բարձրաձայնումը: Գրականության և գրականագիտության մեջ համարձակ գաղափարների ներխուժումը. Գուրգեն Մահարի, Հովհաննես Շիրազ, Պարույր Սևակ, Դերենիկ Դեմիրճյան, Հրաչյա Բոչար, Խաչիկ Դաշտենց, Սերո Խանգաղյան, Համո Սահյան, Մուշեղ Գալշոնյան, Հրանտ Մաթևոսյան, Հակոբ Սալախյան, Հրանտ Թամրազյան... Կերպարվեստում այդ նույն միտումների արտացոլումը: Հովհաննես Զարդարյանի արվեստը, նրա «Գարուն» կտավը: Ֆրանսահայ արվեստագետներ Էդգար Շա-

հինի և Հակոբ Գյուրջյանի ցուցահանդեսները ՀԱՊ-ում: 1956-ին Հայ արվեստի և գրականության տասնօրյակի շրջանակներում Մոսկվայի գեղարվեստի ակադեմիայի սրահներում կայացած «Հայկական մշակույթի օրեր» ցուցահանդեսը. Սարգիս Մուրադյանի «Կոմիտասի վերջին գիշեր» կտավը: Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի արվեստի նոր բացահայտումը, թիֆլիսահայ արվեստագետների ներթափանցումը Հայաստանի գեղարվեստական միջավայր. Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո), Հովսեփ Կարալյանի, Սերգեյ Փարաջանովի, Բաժբեուկ-Մելիքյանների, Վաղարշակ, Հենրի և Ռոբերտ Էլիբեկյանների, Գայանե Խաչատրյանի և այլոց արվեստը: 1962 թ.-ին Երևանում՝ Նկարիչների տանը կայացած «Հինգի ցուցահանդեսը»․ մի խումբ խիզախ երիտասարդների՝ Սիմաս Ավետիսյանի, Հենրիկ Սիրավյանի, Ալեքսանդր Գրիգորյանի, Արփենիկ Ղափանցյանի և Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանի նշանավոր ցուցահանդեսը և Խորհրդային Հայաստանում արդի արվեստի մեկնարկը: Երվանդ Քոչարի քանդակագործության, գրաֆիկայի, տարածական գեղանկարչության հանդեպ արթնացող նոր հետաքրքրությունը, 1965 թ. նրա անհատական ցուցահանդեսի բացումը Երևանում: Ազգային ճարտարապետության ավանդական ձևերի ստեղծագործական վերամշակմամբ կառուցված շենքերը (Մարկ Գրիգորյան): Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի շենքը (1959) և նրա գեղարվեստական հարդարանքը: Մարտիրոս Սարյանի խորհրդային շրջանը, նրա թանգարանի բացումը (1967): 1967 թ. «Գարուն» գրական-գեղարվեստական ամսագրի մեկնարկը:

1958 թ. Երևանում Հ. Կոջոյանի անվան գեղարվեստի դպրոցի (այժմ՝ կրթահամալիր) բացումը:

Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի նկարչության ամբիոնի ստեղծումը (1961): 1965 թ. բարձրաձայնաձայնող ցեղասպանության (1915) խնդիրը, նույն թվի ապրիլին նկարիչների միության տանը այս խորագրով ցուցահանդեսի կազմակերպումը և 1967-ին Մեծ եղեռնի զոհերին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի բացումը: Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի ստեղծումը (1968). ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը, քանդակագործներ՝ Արշամ Շահինյան, Սամվել Մանասյան, Արա Հարությունյան: 1968-ին Էրեբունի-Երևան քաղաքի (մ. թ. ա. 782) հիմնադրման 2750-ամյակի հանդիսավոր տոնակատարությունը. այդ կապակցությամբ հայ արվեստագետների ցուցահանդեսը նկարիչների տանը: «Հովհաննես Թումանյանը կերպարվեստում» երկու ցուցահանդեսների կազմակերպումը Երևանում (1958, 1969): 1969 թ. նկարիչների միությունում Կոմիտասի 100 ամյակին նվիրված ցուցահանդեսը: Մինաս Ավետիսյանի, Հակոբ Հակոբյանի, Արա Բեքարյանի, Վրույր Գալստյանի, Մարտին Պետրոսյանի, Սեյրան Խաթլամաջյանի, Վարոս Շահնուրադյանի արվեստը. հայ արվեստում նկատվող ստեղծագործող անհատի գեղարվեստական ինքնատիպ մտածողության առաջացումը, նրա աշխատանքներում սուբյեկտիվ ընկալումներն ու նրանց գունաալյաստիկական յուրատեսակ արտահայտումը: Ստեղծագործության մեջ գաղափարների մեկնաբանման հաճախ հանդիպող այլաբանական, փոխաբերական-մետաֆորիկ բնույթը:

**Թեմա 7. Հայ արվեստը 1970-ականներին:** 1950-1970-ականների «Խստաշունչ ոճը» հայ արվեստում: Զանդակներում և նկարներում մարդու հոգեկան բարդ ապրումների, տարբեր տրամադրությունների, իրավիճակների արտացոլումը՝ գույների, ձևերի ինքնատիպ մեկնաբանմամբ: 1972 թ. Ժամանակակից արվեստի թանգարանի բացումը. Հենրիկ Իգիթյան (1932-2009): 1970 թ.-ին Երևանում արվեստաբաններ Հենրիկ Իգիթյանի և Ժաննա Աղամիրյանի (1936-1975) նախաձեռնությամբ Հայաստանի մանկական կենտրոնի և պատկերասրահի բացումը: 1971 թ. Լուվրում բացված «Ուրարտուից մինչև մեր օրերը» խորագիրը կրող հայ արվեստին նվիրված ցուցահանդեսը: «Հայկական գույներ» ցուցահանդեսը Բեյրութում (1974) և Մարսելում (1977): Այս միջոցառումների կարևոր նշանակությունը հայ արվեստագետների նոր աշխարհայացքի համար: Պոստմոդեռնիզմի նոր դրսևորումը հայ արվեստում. Հենրի Էլիբեկյան, Վազգեն Բաժբեուկ-Մելիքյան, Արտո Չաքմաքչյան, Արկադի Բաղդասարյան (Արկո): Խորհրդային Հայաստանի մոնումենտալ գեղանկարչությունը (Մարտիրոս Սարյան, Մինաս Ավետիսյան, Վան Խաչատուր, Հովհաննես Մինասյան, Սարգիս Մուրադյան, Գրիգոր Խանջյան, Ռուբեն Ղևոնդյան): Մոնումենտալ արտահայտչականությունը Էդուարդ Իսաբեկյանի պատմական ժանրի կտավներում:

**Թեմա 8. 1980-ականների հայկական արվեստը:** Հայկական ճարտարապետության նոր, եզակի և կերպարով բացառիկ հասարակական շենքերի՝ կինոթատրոնների, հյուրանոցների, մարզահամալիրների, «Զվարթնոց» օդանավակա-

յանի կոնստրուկտիվ համարձակ լուծումները: Երևանի մետրոպոլիտենի բացումը (7 մարտի, 1981) և նրա կայարանների գեղարվեստական հարդարանքները: Մարտիրոս Սարյանի 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Փարիզի՝ Ժորժ Պոմպիդուի անվան արվեստի և մշակույթի կենտրոնում մեծ վարպետի անհատական ցուցահանդեսը: «Հայաստանի արվեստը» ցուցահանդեսի բացումը Բեռլինում (1984): Գրիգոր Խանջյանի գրաֆիկան և գեղանկարչությունը: Մանր ֆորմայի քանդակագործությունը հայ արվեստում (Խաչատուր Իսկանդարյան, Բենիկ Պետրոսյան, Գեորգի Բաղդասարյան, Սամվել Ղազարյան, Գագիկ Ղազարյան, Գարեգին Դավթյան): Խորհրդային շրջանի հայ արվեստի տեսությունը: Անվանի արվեստաբաններ: Գեղարվեստա-թատերական ինստիտուտում Արվեստի պատմության և տեսության բաժնի ստեղծումը (1983), Վահան Հարությունյան: Երևան քաղաքի կոթողային հուշարձանները. Ղուկաս Չուբարյանի, Արա Հարությունյանի, Սարգիս Բաղդասարյանի, Նիկողայոս Նիկողոսյանի, Արտաշես Հովսեփյանի, Արա Շիրազի, Լևոն Թոքմաջյանի քանդակագործությունը: Կերպարվեստում աչքի ընկնող նորարարությունները. առավել անկաշկանդ համարձակ գեղարվեստական մտածողությունը հայ քանդակագործների և նկարիչների արվեստում: Այդ առումով՝ Վալենտին Պոդպոմոգովի, Ռուբեն Ադալյանի, Ռուդոլֆ Խաչատրյանի արգասաբեր գործունեությունը: Նկարիչների միությունում պարբերաբար բացվող խմբակային և անհատական ցուցահանդեսները: «3-րդ հարկ» առաջին կոնցեպտուալ ցուցահանդեսը նկարիչների միությունում (1987):

**Թեմա 9. Հայաստանի 3-րդ հանրապետության արվեստը (1991-1999):** Ճարտարապետական նոր հորինվածքները: Երևանի Պետական Համալսարանում Հայ արվեստի պատմության և տեսության բաժնի վերաբացումը և ամբիոնի ստեղծումը (1996), Լևոն Չուգասզյան: Կասկադը՝ ճարտարապետական, թանգարանային, մշակութային համալիր, Ջիմ Թորոպյան: Գրիգոր Խանջյանի «Տրիպտիխը» Գաֆեսճյան արվեստի կենտրոնում: Երևան քաղաքի նոր քանդակները: Հայաստանի ազգային պատկերասրահի և իր մասնաճյուղերի աշխատանքը: Կոնցեպտուալ արվեստի դրսևորումը Հայաստանում: Նորարար Փորձարարական Արվեստի Կենտրոնի (ՆՓԱԿ) (1992) և «ՀայԱրտ» մշակույթի կենտրոնի (1997) գործունեությունը: Մասնավոր պատկերասրահների մեկնարկը՝ ուղղված արդիի հայ կերպարվեստի հանրահռչակմանը և արվեստի բիզնեսի զարգացմանը: Նկարիչների միության գործունեությունը, ամենամյա ցուցահանդեսները:

## **XX ԴԱՐԻ ԱԿՆԱՌՈՒ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՑԱՆԿ**

(նաև որպես ռեֆերատի թեմաներ)

### **XX դարասկզբի հայ անվանի գեղանկարիչներ**

- |                        |                      |             |
|------------------------|----------------------|-------------|
| 1. Վրթանես Գալուստի    | <b>Ախիկյան</b>       | (1872-1936) |
| 2. Ստեփան Մելիքսեթի    | <b>Աղաջանյան</b>     | (1863-1940) |
| 3. Հմայակ Աբրահամի     | <b>Արծաթպանյան</b>   | (1876-1919) |
| 4. Գևորգ Չաքարի        | <b>Բաշինջաղյան</b>   | (1857-1925) |
| 5. Վահրամ Մկրտչի       | <b>Գայֆեճյան</b>     | (1879-1960) |
| 6. Եղիշե Մարտիրոսի     | <b>Թադևոսյան</b>     | (1870-1936) |
| 7. Փանոս Պողոսի        | <b>Թերլեմեզյան</b>   | (1865-1941) |
| 8. Վանո Գևորգի         | <b>Խոջաբեկյան</b>    | (1875-1922) |
| 9. Հմայակ Ստեփանի      | <b>Հակոբյան</b>      | (1871-1939) |
| 10. Գեորգի Բոգդանի     | <b>Յակոբով</b>       | (1884-1928) |
| 11. Ենովք Ստեփանի      | <b>Նազարյան</b>      | (1868-1929) |
| 12. Հարություն Իսահակի | <b>Շամշինյան</b>     | (1856-1914) |
| 13. Գրիգոր Միքայելի    | <b>Շարբաբչյան</b>    | (1884-1942) |
| 14. Ռաֆայել Մարտիրոսի  | <b>Շիշմանյան</b>     | (1885-1959) |
| 15. Մարտիրոս Սերգեյի   | <b>Սարյան</b>        | (1880-1972) |
| 16. Վարդգես Հակոբի     | <b>Սուրենյանց</b>    | (1860-1921) |
| 17. Տարագրոս Ստեփանի   | <b>Տեր-Վարդանյան</b> | (1878-1953) |
| 18. Արշակ Աբրահամի     | <b>Ֆեթվաճյան</b>     | (1866-1947) |

### **XX դարասկզբի հայ անվանի քանդակագործներ**

- |                        |                       |             |
|------------------------|-----------------------|-------------|
| 19. Հակոբ Մարգարի      | <b>Գյուրջյան</b>      | (1881-1948) |
| 20. Վաղարշակ Մելքոնի   | <b>Մելիք-Հակոբյան</b> | (1882-1955) |
| 21. Միքայել Հովհաննեսի | <b>Միքայելյան</b>     | (1879-1943) |
| 22. Երվանդ Հակոբի      | <b>Ոսկան</b>          | (1855-1914) |
| 23. Անդրեաս Մարութի    | <b>Տեր-Մարության</b>  | (1871-1919) |

## **XX դարի հայ անվանի ճարտարապետներ**

|                          |                    |             |
|--------------------------|--------------------|-------------|
| 24. Ռազմիկ Բեհրուդի      | <b>Ալավերդյան</b>  | (1916-1968) |
| 25. Գրիգոր Գարեգինի      | <b>Աղաբաբյան</b>   | (1911-1977) |
| 26. Բաղդասար Հայրապետի   | <b>Արզումանյան</b> | (1916-2001) |
| 27. Նիկողայոս Գաբրիելի   | <b>Բունիաթյան</b>  | (1878-1943) |
| 28. Մարկ Վլադիմիրի       | <b>Գրիգորյան</b>   | (1900-1978) |
| 29. Ալեքսանդր Հովհաննեսի | <b>Թամանյան</b>    | (1878-1936) |
| 30. Արթուր Արտավազի      | <b>Թաթևանյան</b>   | (1932-2006) |
| 31. Զիմ Պետրոսի          | <b>Թորոսյան</b>    | (1926-2014) |
| 32. Ռաֆայել Սարգսի       | <b>Իսրայելյան</b>  | (1908-1973) |
| 33. Սպարտակ Երենի        | <b>Խաչիկյան</b>    | (1932-1972) |
| 34. Սպարտակ Աղասու       | <b>Կնտեղյան</b>    | (1924-1996) |
| 35. Կարո Սիմոնի          | <b>Հալաբյան</b>    | (1897-1959) |
| 36. Միքայել Դավթի        | <b>Մազմանյան</b>   | (1899-1971) |
| 37. Հովհաննես Սարգսի     | <b>Մարգարյան</b>   | (1901-1963) |
| 38. Հրաչիկ Գրիգորի       | <b>Պողոսյան</b>    | (1935)      |
| 39. Ռոմեո Սուրենի        | <b>Ջուլիակյան</b>  | (1937-2001) |
| 40. Էդուարդ Ավետի        | <b>Սարապյան</b>    | (1918-1984) |
| 41. Սամվել Առաքելի       | <b>Սաֆարյան</b>    | (1902-1969) |
| 42. Հովհաննես Մաթևոսի    | <b>Քաջազնունի</b>  | (1868-1938) |
| 43. Ստեփան Հայկի         | <b>Քյուրբջյան</b>  | (1929-2004) |
| 44. Գևորգ Բարսեղի        | <b>Քոչար</b>       | (1901-1973) |

## **Խորհրդային շրջանի հայ քանդակագործներ**

|                    |                        |             |
|--------------------|------------------------|-------------|
| 45. Գրիգոր Պետրոսի | <b>Ահարոնյան</b>       | (1896-1980) |
| 46. Էդուարդ Մակարի | <b>Աղայան</b>          | (1936-1993) |
| 47. Դավիթ Նիկողի   | <b>Բաբայան</b>         | (1940)      |
|                    | <b>(Դավիթ Երևանցի)</b> |             |
| 48. Գրիգոր Բաբայի  | <b>Բադալյան</b>        | (1922-1993) |

|                         |                      |             |
|-------------------------|----------------------|-------------|
| 49. Գետիկ Հովհաննեսի    | <b>Քաղդասարյան</b>   | (1949)      |
| 50. Սարգիս Իվանի        | <b>Քաղդասարյան</b>   | (1923-2001) |
| 51. Դավիթ Հովհաննեսի    | <b>Քեջանյան</b>      | (1944-2011) |
| 52. Հովհաննես Կարապետի  | <b>Քեջանյան</b>      | (1915-1976) |
| 53. Երվանդ Արշակի       | <b>Գոջաբաշյան</b>    | (1939)      |
| 54. Աղիբեկ Բալաբեկի     | <b>Գրիգորյան</b>     | (1922-1996) |
| 55. Գարեգին Համբարձումի | <b>Դավթյան</b>       | (1954)      |
| 56. Ստեփան Միքայելի     | <b>Թարյան</b>        | (1893-1954) |
|                         | <b>(Թարխարարյան)</b> |             |
| 57. Լևոն Հրաչի          | <b>Թոքմաշյան</b>     | (1937)      |
| 58. Խաչատուր Մարտիրոսի  | <b>Խսկանդարյան</b>   | (1923-2015) |
| 59. Նորայր Սարգսի       | <b>Կարգանյան</b>     | (1948-2014) |
| 60. Տարիել Արամի        | <b>Հակոբյան</b>      | (1941)      |
| 61. Արա Արմենի          | <b>Հարությունյան</b> | (1928-1999) |
| 62. Հովհաննես Գաբրիելի  | <b>Հովհաննիսյան</b>  | (1928-1995) |
| 63. Արտաշես Ավագի       | <b>Հովսեփյան</b>     | (1931-2017) |
| 64. Գազիկ Հովհաննեսի    | <b>Ղազարյան</b>      | (1947)      |
| 65. Սամվել Արմենի       | <b>Ղազարյան</b>      | (1949)      |
| 66. Սերժ Վահանի         | <b>Մեհրաբյան</b>     | (1931-2015) |
| 67. Սերգեյ Դմիտրիի      | <b>Մերկուրով</b>     | (1881-1952) |
| 68. Թերեզա Հայկի        | <b>Միրզոյան</b>      | (1922-2016) |
| 69. Սուրեն Բենիամինի    | <b>Նազարյան</b>      | (1929-1999) |
| 70. Նիկողայոս Բագրատի   | <b>Նիկողոսյան</b>    | (1918-2018) |
| 71. Կառլեն Արսենի       | <b>Նուրիջանյան</b>   | (1929-1982) |
| 72. Արշամ Արտաշեսի      | <b>Շահինյան</b>      | (1918-1972) |
| 73. Արա Հովհաննեսի      | <b>Շիրազ</b>         | (1941-2014) |
| 74. Արտո Սուրենի        | <b>Չաքմաքչյան</b>    | (1933-2019) |
| 75. Ղուկաս Գրիգորի      | <b>Չուբարյան</b>     | (1923-2009) |
| 76. Բենիկ Գեղամի        | <b>Պետրոսյան</b>     | (1939-1996) |
| 77. Յուրի Գուրգենի      | <b>Պետրոսյան</b>     | (1941)      |

|                        |                                 |             |
|------------------------|---------------------------------|-------------|
| 78. Արա Միհրանի        | <b>Սարգսյան</b>                 | (1902-1969) |
| 79. Ֆրիդրիխ Սկրաչի     | <b>Սողոյան</b>                  | (1936-2019) |
| 80. Գագիկ Վարազդատի    | <b>Ստեփանյան</b>                | (1950)      |
| 81. Սուրեն Լևոնի       | <b>Ստեփանյան</b>                | (1895-1971) |
| 82. Լևոն Սուրենի       | <b>Վարդանյան</b>                | (1948-2013) |
| 83. Այծեմնիկ Համազասպի | <b>Ուրարտու (Տեր-Խաչատրյան)</b> | (1899-1974) |
| 84. Ռուզան Գուրգենի    | <b>Քյուրքչյան</b>               | (1930-2002) |
| 85. Երվանդ Սիմոնի      | <b>Քոչար</b>                    | (1899-1979) |

### **Խորհրդային շրջանի հայ գեղանկարիչներ**

|                       |                    |             |
|-----------------------|--------------------|-------------|
| 86. Միեր Մանուկի      | <b>Աբեղյան</b>     | (1909-1994) |
| 87. Արտաշես Սահակի    | <b>Աբրահամյան</b>  | (1921-2003) |
| 88. Ռուբեն Մարտիրոսի  | <b>Ադալյան</b>     | (1929-2019) |
| 89. Յուլակ Լևոնի      | <b>Ազիզյան</b>     | (1912-1990) |
| 90. Գրիգոր Մինասի     | <b>Ազիզյան</b>     | (1923-2003) |
| 91. Արմեն Արշակի      | <b>Աթայան</b>      | (1922-2021) |
| 92. Ռաֆայել Գեղամի    | <b>Աթոյան</b>      | (1931-2014) |
| 93. Պերճ Արմենակի     | <b>Ակնունի</b>     | (1921-1991) |
| 94. Վարդգես Կարապետ   | <b>Աղաբաբյան</b>   | (1909-?)    |
| 95. Գրիգոր Խորենի     | <b>Ադալյան</b>     | (1926-2009) |
| 96. Հակոբ Հարությունի | <b>Անանիկյան</b>   | (1919-1977) |
| 97. Ստեփան Խաչատուրի  | <b>Անդրանիկյան</b> | (1927-2017) |
| 98. Սեդրակ Առաքելի    | <b>Առաքելյան</b>   | (1884-1942) |
